Պ Լ Ա Ն

«ԳՈՐԻՍԻ ՅՈՒ. ԲԱԽՇՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 3 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի

ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ

Գորիս 2025թ.

Ն Ա Խ Ա Բ Ա Ն

Աղետների ռիսկի կառավարման պլանի նպատակն է հանրակրթական դպրոցի աշակերտների և անձնակազմի անվտանգության և ՀԴ-ի դիմակայունության բարձրացումն արտակարգ իրավիճակների ժամանակ:

ԱՌԿ պլանն ուղղված է՝

ա. ՀԴ-ի և շրջակա տարածքին սպառնացող աղետների ռիսկի նվազեցմանը

բ. ԱԻ-ում արագ և արդյունավետ արձագանքմանը,

գ. ՀԴ-ի գործընթացի անխզելիության և շարունակականության ապահովմանը:

ԱՌԿ պլանի խնդիրներնեն՝

ա. ՀԴ-ի ԱՌԿ համակարգի ձևավորումն ու զարգացումը,

բ. ՀԴ-ի և շրջակա տարածքում վտանգների բացահայտումը,

գ. ՀԴ-ի խոցելիության և կարողությունների բացահայտումը,

դ. ԱՌՆ միջոցառումների մշակումը,

Գիտելիքի և նորարարության միջոցով աշակերտների, այդ թվում նաև հաշմանդամություն ունեցող աշակերտների և անձնակազմի շրջանում անվտանգության և դիմակայունության մշակույթի ձևավորմանն ուղղված միջոցառումների մշակումը,

ԱԻ արձագանքման միջոցառումների մշակումը, այդ թվում՝ կյանքի փրկության և վնասվածքների նվազեցման, ՀԴ-ի գույքի պահպանման:

I. ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

ՀԴ-ի ԱՌԿ համակարգի նորմալ և արդյունավետ գործունեության, աղետների ռիսկի նվազեցման միջոցառումների կազմակերպման և իրականացման, արտակարգ իրավիճակներում գործելու ընթացակարգերի սահմանման, արտակարգ իրավիճակներում ՀԴ-ի աշակերտներ ի և անձնակազմի պաշտպանության կազմակերպման նպատակով տնօրենի «03» փետրվար 2025թ. N15 հրամանով ստեղծվել է ԱՌԿ խորհուրդ: Խորհրդում ընդգրկվածեն՝ ՀԴ-ի աշխատակիցներ, ծնողներ, ինչպես նաև նշանակվել են ոլորտային պատասխանատուներ:

Արտակարգ իրավիճակների ժամանակ աշակերտների և անձնակազմի պաշտպանության կազմակերպումն իրականացվում է ԱՌԿ խորհրդի կողմից: ՀԴ-ի տնօրենի հրամանով հաստատված N 6 հավելվածով որը երեք միջոցառում իրականացնելու դեպքում՝ աղետներ իռիսկի կառավարման պլանը համարվում է գործողության մեջ դրված:

Նախատեսվում է տարին երկու անգամ հրավիրել ԱՌԿ խորհրդի նիստ (ԱՌՆ միջոցառումների պլան-ժամանակացույց՝ ՀԴ տնօրենի հրամանով հաստատված N 3 հավելված): ԱՌԿ խորհրդի նիստերը արձանագրվում (Ուղեցույցի N4 ձև) և կցվում են ԱՌԿ պլանին:

II. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳԻՐԸ

Աղյուսակ 1

ՀԻՄՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐ											
Հ/Հ	ՑՈՒՑԱՆԻՇԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ		ԱՐԺԵՔ								ՆՇՈՒՄՆԵՐ
2.1 ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ											
2.1.1	Անվանումը		Գորիսի թիվ 3 հ/դ								
2.1.2	Մարզ		Սյունիք								
2.1.3	Համայնք		Գորիս								
2.1.4	Բնակավայր		Գորիս								
2.1.5	Հասցեն		Սյունիքի 183								
2.1.6	Տնօրենի ժ/պ՝ ԱՌԿ խորհրդի ղեկավար		Ս.Ավանեսյան								
2.1.7	Տնօրենի տեղակալ		Ա.Առստամյան								
2.1.8	ՄԿԱ գծով համակարգող		Ա.Գևորգյան								
2.1.9	Վարչատնտեսական մասի համակարգող		Դ.Կոստանդյան								
2.1.10	Դպրոցի զինվորական ղեկավար		Ա.Հովսեփյան								
2.1.11	Ազդարարման և տեղեկատվության փոխանակման պատասխանատու		Ա.Հարությունյան								
2.1.12	Հրդեհային անվտանգության պատասխանատու		Դ..Կոստանդյան								
2.1.13	Առաջին օգնության պատասխանատու		Գ.Տոռոզյան								
2.1.14	Առաջին հոգեբանական աջակցության պատասխանատու		Ա.Ծատրյան								
2.1.15	Հաշմանդամություն ունեցող աշակերտների հարցերով պատասխանատու		Հ.Տատինցյան								
2.1.16	Փոստային դասիչ		3202								
2.1.17	Պաշտոնական կայք		goris3school.am								
2.1.18	Էլեկտրոնային փոստ		goris3@schools.am								
2.1.19	Հեռախոս (ներառյալ՝ տարածքի կոդը)		0284-2-42-56								
2.1.20	Ֆաքս		Բացակայում է								
2.1.21	Աշխարհագրական դիրքը		Նախալեռնային								
2.1.22	Սահմանային դիրքը		Սահմանամերձ								
2.1.23	Աշխատանքային շաբաթ		5-օրյա								
2.1.24	Աշխատանքային ժամակարգը		Միահերթ								
2.1.25	Աշխատանքային ռեժիմ		Սովորական ռեժիմ								
2.1.26	Կրթական ծրագրի աստիճանը		Հիմնական								
2.1.27	Կրթական ծրագրի տեսակը		Ընդհանուր								
2.1.28	Նախակրթարան		Բացակայում է								
2.1.29	Մասնաշենքերի քանակը	1վարչական	1	2	3						Եթե տողը բաժանված է 7 մասի, ապա նշում է կատարվում յուրաքանչյուր մասնաշենքի համար
		2 ուսումնական									
		3 ուսումնական									
		4 ուսումնական									
		5 ուսումնական									
		6 ուսումնական									
		7 սպորտդահլիճ									
		8 կաթսայատուն									
2.1.30	Հարկայնությունը ըստ մասնաշենքերի		2	3	1						

ՀԻՄՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐ											
Հ/Հ	ՑՈՒՑԱՆԻՇԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ		ԱՐԺԵՔ								ՆՇՈՒՄՆԵՐ
2.1.31	Շահագործման տարեթիվը ըստ մասնաշենքերի		1966								
2.1.32	Շինության տիպը	B - արտաքին կրող պատեր, ներքին երկաթբետոնե հավաքովի կամ միաձույլ կարկաս	B	B	B						
		C- արտաքին երկաթ-բետոնե կարկաս, ներքին հավաքովի երկաթբետոնե կրող պատեր								C	
		D1- հավաքովի երկաթբետոնե կարկաս	D1	D1	D1						
2.1.33	Տիպայնություն		Տիպարային								
2.1.34	Տեղեկատվություն շենքերի նախագծային սեյսմակայունության վերաբերյալ /5, 6, 7, 8, 9, 10 բալ/		7 բալ								Մինչև 1988թ. կառուցված բոլոր շենքերի ու կառույցների նախագծային սեյսմակայունությունը ընդունված է եղել 7 բալ:
	Տեղեկատվություն շենքերի փաստացի սեյսմակայունության վերաբերյալ /5, 6, 7, 8, 9, 10 բալ/		Բացակայում է								Տեղադրել միայն մասնագիտական կառույցների կողմից տրամադրված տվյալները
	Տեղեկատվություն շենքերի տեխնիկական վիճակի գնահատականի վերաբերյալ /1, 2, 3, 4 կարգ/		Բացակայում է								Տեղադրել միայն մասնագիտական կառույցների կողմից տրամադրված տվյալները
	Տեղեկատվություն շենքերի խոցելիության մակարդակի (աստիճան) վերաբերյալ /ցածր, միջին, բարձր/		Բացակայում է								Տեղադրել միայն մասնագիտական կառույցների կողմից տրամադրված տվյալները
	Շենքերի գտնվելու սեյսմիկ գոտին /1,2,3-րդ գոտի/		1								Տեղադրել միայն մասնագիտական կառույցների կողմից տրամադրված տվյալները
2.1.35	Տեղեկատվություն տեխնիկական վիճակի և սեյսմիկ խոցելիության մակարդակի գնահատման վերաբերյալ	Եզրակացության հերթական համարը	Բացակայում է								Եզրակացութ-յունը կցել ԱՌԿ պլանին
		Եզրակացությունը տրամադ-րած մարմինը	Բացակայում է								
	Շենքի գտնվելու գրունտի կարգը	I կարգ	Բացակայում է								Տեղադրել միայն մասնագիտա-կան կառույցնե-րի կողմից տրամադրված տվյալները
		II կարգ	Բացակայում է								
		III կարգ	Բացակայում է								

ՀԻՄՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐ					
Հ/Հ	ՑՈՒՑԱՆԻՇԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ		ԱՐԺԵՔ		ՆՇՈՒՄՆԵՐ
2.1.36	Շենքի և շինութ-յունների հրդեհ-ավտանգավորությա ն դաս	A- պինդ նյութերի հրդեհներ՝ փայ-տանյութ,գործ-վածք, թուղթ	A		Այս տվյալները հնարավորութ-յուն են տալիս ընտրել ՀԴ-ի համար անհրաժեշտ և համապատասխան կրակմարիչներ /400մ² – 2 հատ կրակմարիչ/
		C - գազերի հրդեհներ	C		
		E – էլեկտրասա-րքավորումների այրման հետ կապված հրդեհներ	E		
2.1.37	Պահպանվող վտանգավոր նյութեր՝		Բացակայում է		
	Քիմիական	Անվանում	-		
		Առկա ծավալ	-		
		Պահպանման թույլատրելի ծավալը	-		
2.1.38	Գազերի տարաներ՝		Բացակայում է		
	Գտնվելու վայր				
	Գազի տեսակ				
	Քանակ (հատ)				
	Քաշ (Կգ)				
	Գազի ճնշման անվանական մեծություն (Պա)				
2.2 ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ԵՎ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ					
2.2.1	ՀԴ-ի նախագծային հզորություն (քանի աշակերտի համար է կառուցվել)		1100		
2.2.2	ՀԴ-ի առավելագույն ծանրա-բեռնվածությունն արտակարգ իրա-վիճակների պայմաններում (քանի աշակերտ կարող է ընդունել)		1300		
2.2.3	Հաճախող աշակերտների թվաքանակ		Արակա ն սեռ	Իգական սեռ	
			341	309	650
	Այլ բնակավայրերից հաճախող աշակերտների քանակ՝ ըստ բնա-կավայրերի		-		-
2.2.4	Աշակերտների թվաքանակ	Նախակրթարան	-		Բացակայում է
		Տարրական դասարաններում (1-4)	162	136	298
		Միջին դասարաններում (5-9)	179	173	352
2.2.5	Անձնակազմի թվաքանակ	Վարչական	2	3	5
		Մանկավարժական և ուսուցչական	4	51	55
		Սպասարկման	8	14	22
2.2.6	Գիշերող աշակերտների թվաքանակ				
2.2.7	Գիշերող անձնակազմի թվաքանակ		-	-	-
2.2.8	Հաշմանդամություն ունեցող աշակերտների թվաքանակ	Ձայնային, խոսքի և ինտելեքտուալ /մտավոր/ խան-գարում ունեցող աշակերտներ	1	-	1
		Ձայնային և խոսքի	-	-	

ՀԻՄՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐ										
Հ/Հ	ՑՈՒՑԱՆԻՇԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ		ԱՐԺԵՔ							ՆՇՈՒՄՆԵՐ
		խանգարում ունեցող աշակերտներ								
		Ինտելեքտուալ /մտավոր/ խան-գարում ունեցող աշակերտներ	8			1				9
		Մտավոր խնդիր-ներ ունեցող աշակերտներ	-			-				-
		Հենաշարժական համակարգի խախտումներ ունեցող աշակերտներ	-			1				1
		Սոցիալհոգեբա-նական զարգաց-ման խնդիրներ ունեցող աշակերտներ	-							-
		Տարբեր ախտա-բա-նական վիճակներով հաշմանդամութ-յուն ունեցող աշակերտներ	-			-				-
2.2.9	Շենքերի ընդհանուր մակերես (մ²)		87							
2.2.10	Բակային տարածքի մակերես (մ²)									
2.2.11	Հիմնական մուտքերի/ելքերի քանակ		1 հատ							Բոլոր մասնաշենքերը միացված են մեկ ընդհանուր միջանցքով
	Հասանելիություն հաշմանդամություն ունեցող անձանց համար		0							
2.2.12	Էրացուցիչ մուտքերի/ելքերի քանակ		4							
	Հասանելիություն հաշմանդամություն ունեցող անձանց համար.		1							
2.2.14	Դասասենյակների քանակ (հատ)		1	4	6		8	1		7	Ընդհանուր 27
2.2.15	Բուժ. Աշխատողի սենյակ		1								
2.2.16	Արհեստանոց								1		
2.2.17	Ֆիզիկայ իլաբորատորիա						1				
2.2.18	Քիմիայի լաբորատորիա						1				
2.2.19	Քիմիայի լաբորատորիա առկա վտանգավոր նյութեր									1	
2.2.20	Կենսաբանության լաբորատորիա						1				
2.2.21	Հանդիսությունների դահլիճ		2								
2.2.22	Մարզադահլիճ								1		
2.2.23	Ճաշարան					1					
2.2.24	Խաղահրապարակ		Առկա								
2.2.25	Նկուղային հարկի առկայություն		Բացակայում է								
	Նշանակությունը		Բացակայում է								
2.2.26	Արտաքին լուսավորություն		Առկա								Փողոցային
2.2.27	Պարսպի /ցանկապատի տեսակ		Մետաղական								
			Մոնոլիտ								
	Պարսպի /ցանկապատի երկարութ-յուն (մ)		220 մ								
	Պարսպի /ցանկապատի բարձրութ-յուն (մ)		1-3								

ՀԻՄՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐ			
Հ/Հ	ՑՈՒՑԱՆԻՇԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ԱՐԺԵՔ	ՆՇՈՒՄՆԵՐ
2.2.28	Շենքում այլ նշանակության օբյեկտ-ների, կազմակերպությունների գոր-ծունեություն		Բացակայում է
2.2.29	Մոտակա պետական սահմանից (կմ)	6-7	Օդային
2.2.30	Մոտակա ոստիկանության բաժան-մունքից (կմ)	2.5	Գորիսի ոստիկանություն
2.2.31	Մոտակա հրշեջ փրկարարական ջոկատից (կմ)	2 կմ	
2.2.32	Մոտակա հիվանդանոցից (կմ)	2.5-3	
2.2.33	Հեռավորությունը մոտակա ազդարարման շչակից (կմ)	2 կմ	

III ՎՏԱՆԳՆԵՐԻ, ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԻ ՆՎԱԶԵՑՄԱՆ ԵՎ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

3.1 Վտանգների և աղետների ռիսկի նվազեցման միջոցառումների նկարագրություն

Աղյուսակ 2

Վտանգի տեսակն ու ընդ-հանուր բնութագիրը	Աղետների ռիսկի նվազեցման միջոցառումներ	Նշումներ
Երկրաշարժ - ՀԴ-ը գտնվում է սեյսմիկ գոտում: Ուժեղ երկրաշարժի դեպքում ՀԴ-ում կարող է տեղի ունենալ մասնակի կամ ամբողջական փլուզումներ:	Երկրաշարժի ժամանակ գործողությունների և վարքականոնների ուսուցման, անձնակազմին և աշակերտներին, այդ թվում հաշմանդամություն ունեցող աշակերտներին	
	Ուժեղ երկրաշարժի դեպքում անձնակազմի և աշակերտների պաշտպանության կազմակերպումը և իրականացումը թեմայով գործնական պարապմունքների անցկացում	
	Սթրեսադիմացկունության և հոգեկան կայունության որակների զարգացման դասընթացների անցկացում անձնակազմի և աշակերտների համար	
	Տարահանման պայմանական նշանների տեղադրում և ուսուցում	
	Մշակել և համապատասխան վայրերում տեղադրել ԱԻ-ում աշակերտների և անձնակազմի տա-րահանման պլաններ /հարկերի, դասարանների, և այլ տեսանելի տեղերում/	
	Տարահանման պլաններին անձնակազմի և աշակերտների ծանոթացում	
	Ուսումնասիրել դասասենյակներում անվտանգ վայրերը, որտեղ երկրաշարժի ժամանակ պետք է պատսպարվել և ծանոթացնել անձնակազմին և աշակերտներին	
	Լուսամուտների և դռների ապակիները պատել պաշտպանիչ թաղանթով՝ առաջնա-հերթությունը տալով դասասենյակներին և տարահանման երթուղիներին	
	Ստորին հարկի պատուհանների վանդակաճաղերը հանել կամ դարձնել շարժական	
	Տարահանման ուղիների վրա գտնվող բոլոր ելքերի ներս բացվող դռները վերակառուցել, որ բացվեն դեպի դուրս	
	Պարբերաբար ստուգել ոչ հիմնական դռների (տարահանման ելքերի) գործածելիությունը	
	Վերացնել միջանցքների դռների բացվածքների շեմերին հատակի բարձրության տարբերությունները	
	Հուսալի ամրացնել պատին, հատակին, առաստաղին՝	

Վտանգի տեսակն ու ընդ-հանուր բնութագիրը	Աղետների ռիսկի նվազեցման միջոցառումներ	Նշումներ
	կահույք, օդափոխիչներ, օդորակիչներ, ջրատաքացուցիչներ, նկարներ, գրատախտակներ, հրդեհային անվտանգության միջոցներ, լուսավորող սարքեր. Էլեկտրոնային սարքավորումներ / հեռուստացույց, համակարգիչ / Անիվներով տեղաշարժվող ծանրիրեր / դաշնամուր / և այլ առարկաներ	
	Պատուհանագոգերը, պահարանների վերին հատվածները ազատել առարկաներից՝ ծաղկամաններ և այլն	
	Տարահանման ուղիները, տարահանման հիմնական ելքերը և տարահանման ոչ հիմնական ելքերը չարգելափակել ծանր և մեծածավալ առարկաներով	
	Հենաշարժական համակարգի խախտումներ ունեցող անձանց համար վերացնել տարբեր բնույթի խոչընդոտները	
	Դասարանների և դահլիճների աթոռների քանակը համապատասխանեցնել նախագծման նորմերով սահմանված քանակին և հեռավորությանը ԱԻ-ում մարդկանց տարահանման կազմակերպման, ինչպես նաև՝ սակավաշարժուն, թիկնաթոռ սայլակով, քայլակովտեղաշարժվող անձանց ազատ տեղաշարժման համար	
	Հենաշարժական համակարգի խախտումներ ունեցող անձանց համար կառուցել թեքահարթակներ	
	Լսողական խնդիրներ ունեցող անձանց համար տեղադրել լուսավիբրացիոն ազդանշաններ, վահանակներ կամ «FM» համակարգ	
	Տեսողության խնդիրներ ունեցող անձանց համար տեղադրել ձայնային ազդանշաններ, բրայլյան վահանակներ, իսկ դռների շեմի մակերևույթը և տարահանման ելքերը պատել վառդեղին ուռուցիկ նյութով	
	Ջրամատակարարման համակարգի անխափան աշխատանքի ապահովում	
	Էլեկտրամատակարարման համակարգի անխափան աշխատանքի ապահովում	
	Գազամատակարարման համակարգի անխափան աշխատանքի ապահովում	
	Ջրահեռացման համակարգի անխափան աշխատանքի ապահովում	
	Կոյուղու համակարգի անխափան աշխատանքի ապահովում	

Վտանգի տեսակն ու ընդ-հանուր բնութագիրը	Աղետների ռիսկի նվազեցման միջոցառումներ	Նշումներ
Առատ տեղումներ (սելավ) – Առատ տեղումները բնորոշ են տեղանքին: Տեղադիրքի և ջրահեռացման համակարգի բացակայության պատճառով առատ տեղումների հետևանքով ՀԴ-ի տարածքում առաջանում են ջրային կուտակումներ:	Ջրահեռացման համակարգի կառուցում	
	Տանիքի վերանորոգում	
Հրդեհ – Հրդեհային անվ-տան-գության կանոնների խախտ-ման դեպքում կարող է առաջանալ հրդեհ:	Հրդեհի ազդարարման ինքնաշխատ համակարգի տեղադրում	
	Համապատասխան քանակի վահանակներին կրակմարիչների տեղադրում	
	Կրակմարիչները լիցքավորել ժամանակին (համաձայն կրակմարիչի տեխնիկական անձնագրի)	
	Տարածքում հիդրանտի տեղադրում	
	Շենքի ներքին հրշեջ ծորակների տեղադրում	
	Շենքի ներքին հրշեջ ծորակները համալրել փողակներով և փողրակներով	
	Իրականացնել ներքին հրշեջ ծորակների (դրանց անհրաժեշտ առկայության դեպքում) ջրի բացթողման միջոցով տեխնիկական զննում՝ ոչ պակաս, քան տարեկան 2 անգամ (գարուն-ամառ, աշուն-ձմեռ)	
	Մշտական ջրամատակարարման ապահովում	
	Ոչ գործարանային էլեկտրական տաքացուցիչները փոխարինել գործարանային էլեկտրական տաքացուցիչներով	
	Ջրի պաշարների կուտակում	
	Տանիքի փայտյա կոնստրուկցիաների հրապաշտպան լուծույթապատում	
	Անձնակազմին և աշակերտներին վարքականոնների ուսուցում	
	Հրդեհային անվտանգության հարցերով անձնակազմի և նոր ընդունված աշխատակիցների հրահանգավորում	
	Անձնակազմին հրդեհաշիջման առաջնային միջոցներից օգտվելու վարքականոնների ուսուցում	
	Հրդեհաշիջման կազմակերպում թեմայով գործնական պարապմունքի անցկացում	
	Դասասենյակների և այլ պատերը հարդարել ոչ դյուրավառ նյութերով	

Վտանգի տեսակն ու ընդ-հանուր բնութագիրը	Աղետների ռիսկի նվազեցման միջոցառումներ	Նշումներ
	ԱԻ-ում հատուկ ծառայությունների ավտոմեքենաների (հրշեջփրկարարական, շտապօգնության, ոստիկանության) մոտեցման համար ազատ պահել ՀԴ-ի մերձակա ուղիները	
	Մշակել և համապատասխան վայրերում տարահանման պլանների տեղադրում /հարկերի, խմբեր, ընդհանուր օգտագործման տեսանելի վայրի և այլն/, աշակերտների և անձնակազմի ուսուցում	
	Հրդեհային անվտանգության և տարահանման պայմանական նշանների տեղադրում և ուսուցում (Տեսողության խնդիրներ ունեցող աշակերտների համար տարահանման նշանները պատրաստել, դեղին և սև գույններով)	
	Հոսանքալարերն անցկացնել հակահրդեհային անվտանգության կանոնների պահպանմամբ	
	Կրակային և հրդեհավտանգ այլ աշխատանքների կատարման ժամանակ հրդեհային անվտանգության կանոնների կատարման մշտական հսկողություն	
Համաճարակային բռնկում-Գրիպի գլոբալ համաճարակ-Ները կամ պանդեմիաները պարբերաբար կրկնվում են և ՀԴ-ներն ամենա խոցելի հաստատություններից են	Անձնակազմին և աշակերտներին վարքականոնների ուսուցում	
	Սանիտարական կանոնների պահպանում	
	Պարբերաբար իրականացնել համապատասխան մակերեսների մաքրում և ախտահանում	
	Բոլորին հասանելի վայրերում տեղադրել ալկոհոլային հիմքով ախտահանիչ միջոցներ	
	Պարբերաբար իրականացել շենքերի օդափոխություն	
	Անհատական պաշտպանության միջոցների ձեռքբերում և պահպանում՝պաշտպանիչ շնչադիմակներ, պաշտպանիչ ձեռնոցներ	
	Որոշել այն տարածքները,որտեղ մեկուսացվում են հիվանդները:	

Աղյուսակ N 3

3.2 Կարողությունների բարելավման միջոցառումների նկարագրություն

Հ/Հ	Կարողությունների բարելավման միջոցառումներ	Նշումներ
	ՀԴ անձնակազմի ԱՌԿ վերապատրաստում	
1	ԱՌԿ խորհրդի վերապատրաստում	Անհրաժեշտ է
2	Ուսուցչական անձնակազմի վերապատրաստում	Անհրաժեշտ է
3	Վարչական անձնակազմի վերապատրաստում	Անհրաժեշտ է
4	Օժանդակ անձնակազմի վերապատրաստում	Անհրաժեշտ է
5	ԱՌԿ ոլորտային պատասխանատուների վերապատրաստում	Անհրաժեշտ է
6	Բուժքրոջ վերապատրաստում	Անհրաժեշտ է
7	Հոգեբանի վերապատրաստում	Անհրաժեշտ է
8	Հատուկ մանկավարժի վերապատրաստում	Անհրաժեշտ է
	Տարահանման պլանավորում	
1	Փակցնել / պահպանել տարահանման պլանները / տարահանման սխեմաները	Անհրաժեշտ է
2	Փակցնել / պահպանել տարահանման պայմանական նշանները	Անհրաժեշտ է
	ԱՌԿ բյուջե	
1	ՀԴ բյուջեում նախատեսել ԱՌԿ ծախսաբաժին	Անհրաժեշտ է
	Արտաքին և ներքին կարողություն	
1	ՀԴ-ի հարակից տարածքում ապահովել անվտանգ տարածք	Անհրաժեշտ է
2	Արձագանքող մեքենաների մոտեցման համար ապահովել ազատ ուղիներ	Անհրաժեշտ է
3	Ապահովել տարահանման համար բավարար ելքեր	Անհրաժեշտ է
4	Ապահովել բուժկետ	Առկա
	Տեղեկատվության հաղորդման միջոցներ	
1	Ձեռքբերել շարժական ռադիոկապի սարքեր 4 հատ	Անհրաժեշտ է
2	ՀԴ-ում ապահովել համացանց	Առկա
3	ՀԴ-ում ապահովել քաղաքային /գծալարային / հեռախոսակապ	Առկա
4	ՀԴ-ում ապահովել ներքի նհեռախոսակապ	Անհրաժեշտ է
5	ՀԴ-ում ապահովել բարձրախոսային համակարգ	Անհրաժեշտ է
6	Ձեռքբերել շարժական բարձրախոս 2 հատ	Անհրաժեշտ է

Հ/Հ	Կարողությունների բարելավման միջոցառումներ	Նշումներ
	Առաջնային հրդեհաշիջման միջոցներ	
1	Պարբերաբար ստուգել 4 հատ կրակմարիչների պիտանելիությունը	Անհրաժեշտ է
2	Լիցքավորել կրակմարիչները	Ըստ անհրաժեշտության
3	Ձեռքբերել փոշային կրակմարիչներ 5 հատ	Անհրաժեշտ է
4	Տեղադրել ներքին հրշեջ ջրամատակարարման ցանց՝ իր ծորակներով	Անհրաժեշտ է
5	Ապահովել հրշեջ ծորակների անխափան աշխատանքը	Անհրաժեշտ է
6	Տեղադրել հրշեջ պահարան 8 հատ	Անհրաժեշտ է
7	Ձեռքբերել փողակ 8 հատ	Անհրաժեշտ է
8	Ձեռքբերել փողրակ 8 հատ	Անհրաժեշտ է
9	Պարբերաբար ստուգել 1 հատ հրշեջ վահանակի առկայությունը	Անհրաժեշտ է
	Հրդեհաշիջման համար ջրի աղբյուր	
1	ՀԴ տարածքում տեղադրել հրշեջ հիդրանտ	Անհրաժեշտ է
2	Կառուցել հրշեջ ջրավազան	Անհրաժեշտ է
3	Ձեռքբերել ջրի պահպանման տակառ (0.2 մ^3 ոչ պակաս)	Առկա
	Առաջին օգնության միջոցներ	
1	Ձեռք բերել պատգարակ 1 հատ	Անհրաժեշտ է
2	Ձեռքբերել առաջին օգնության արկղ 1 հատ	Անհրաժեշտ է
	Տարահանման համար օգտագործման միջոցներ	
1	Ձեռքբերել հզոր լապտեր 2 հատ	Անհրաժեշտ է
2	Տեղադրել տարահանման ներքին լուսավորության համակարգ	Անհրաժեշտ է
	Համագործակցություն	
1	Ապահովել համագործակցություն ՆԳՆ ՓԾ տարածքային ստորաբաժանման հետ	Իրականացվում է
2	Ապահովել համագործակցություն այլ ՀԴ-ների հետ	Իրականացվում է

IV. ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐՈՒՄ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ

ՀԴ-ն, ելնելով արտակարգ իրավիճակի տեսակից, արտակարգ իրավիճակներում գործողությունները կազմակերպում և իրականացնում է համաձայն սույն պլանի Արտակարգ իրավիճակներում գործողությունների կազմակերպումը և իրականացումը բաժնի ենթաբաժինների և ՀԴ տնօրենի հրամանի N 4, N 5 և N 6 հավելվածների:

4.1 Ազդարարման և իրազեկման կազմակերպումը և իրականացումը

Ազդարարման և տեղեկատվության փոխանակման պատասխանատուն է՝ Ա. Հարությունյան:

Ազդարարման և իրազեկման հիմնական նպատակն է ԱԻ սպառնալիքի կամ առաջացման և նրա բնույթի մասին անձնակազմին և աշակերտներին նախազգուշացումը, ինչպես նաև տեղեկացումը՝ վարքականոնների, կյանքի և առողջության, ԱԻ հետևանքների մեղմացման մասին: Արտակարգի բավիճակի վերաբերյալ ՀԴ-ի անձնակազմի և աշակերտների իրազեկումն իրականացվում է նրանց մոտ անհիմն մտքերի հետևանք հանդիսացող անհանգստության և խոսակցությունների ու բամբասանքի արդյունքում ստեղծված հասարակական քաոսի առաջացումը կանխարգելելու, հրատապ միջոցառումներ (տարահանում, պատսպարում, անհատական պաշտպանական միջոցների ապահովում) իրականացնելու և անձնակազմի ու աշակերտներին նորմալ կյանքի վերադարձնելու գործում աջակցելու համար: ՀԴ-ն իրականացնում է անձնակազմի և աշակերտների իրազեկումը՝ կիրառելով առկա բոլոր միջոցները:

ԱԻ մասին տեղեկատվությունը ներառում է տվյալներ՝ ԱԻ-ի սպառնալիքի և առաջացման մասին, ԱԻ-ի մասշտաբին նյութական կորստի մասին, ԱԻ-ի հետևանքների մեկուսացման /տեղայնացման/ մասին և ԱԻ-ի գոտում վիճակի մասին: Ծնողների հաղորդակցությունը կազմակերպելու համար մատչելի և ապահով վայրում պահվում է սովորողների, աշխատակազմի և ծնողների ցուցակը, որում նշվում է նրանց անուն ազգանունը, բնակության հասցեն, հեռախոսահամարները և այլ տվյալները՝տպագիր տարբերակով և էլեկտրոնային կրիչների վրա:

ԱԻ առաջացման և սպառման դեպքում ազդարարումը իրականացվում է հետևյալ տարբերակներով՝

Ա-տարբերակ.

ա. Ազդարարումն իրականացվում է հետևյալ համակարգով՝

(1) էլ. եղանակով /դպրոցի զանգով և շչակով/

բ. Ազդարարման սարքավորումը նախազգուշացնում է հետևյալ եղանակներով՝

(1) ձայնով,

գ. Ազդարարման կոճակները տեղակայված են՝

(1) դպրոցի զանգի կոճակը տեղադրված է ուսցչանոցում, շչակի կոճակը տեղադրված է 2-րդ հարկի միջանցքում:

Ազդարարման ազդանշանի պայմանական ազդանշաններ են՝

- Երկրաշարժի դեպքում՝ որպես այդպիսին, պայմանական ազդանշան չի կիրառվում, քանի որ երկրաշարժի ցնցումներն ինքն ազդանշան են,
- Հրդեհի դեպքում՝ 2-3 բոպե ընդատվող զանգ,
- Համայնքում առկա է LD-800, C-40 տիպի ազդարարման շչակներ:

ԱԻ առաջացման կամ դրա սպառնալիքի դեպքում հաղորդակցությունը իրականացվում է հետևյալ ուղղություններով՝

- Տեղական ինքնակառավարման մարմին,
- մարզպետարան,
- Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն,
- Մասնագիտական կառույցներ (ոստիկանություն, փրկարար ծառայություն, շտապ օգնություն, և այլն),
- Սոցիալական ծառայություն,
- ծնողներ,
- զանգվածային լրատվական միջոցներ:

ԱԻ սպառնալիքի կամ առաջացման դեպքում տեղեկատվության փոխանակումն իրականացվում է համաձայն ՀԴ տնօրենի հրամանով հաստատված N 4 հավելվածի:

4.2 Տարահանման և պատսպարման կազմակերպումը և իրականացումը

Տարահանման և պատսպարման պատասխանատուն է՝ Ա. Գևորգյանը: Տարահանման նպատակն է հնարավոր մարդկային, նյութական և մշակութային կորուստների կանխումն ու նվազեցումը: Տարահանումը կարող է իրականացվել բնակչության պաշտպանության մյուս ձևերի հետ համատեղ, այն ուղեկցվում է բնակչության պատսպարմամբ, անհատական պաշտպանական միջոցների ապահովմամբ: Մարդիկ տարահանվում են այն տարածքից, որտեղ առաջացել են կամ կարող են առաջանալ կյանքին և առողջությանը բացասաբար ազդողգործոններ և տեղաբաշխվում է վտանգավոր տարածքից դուրս՝ անվտանգ գոտում:

Անձնակազմի և աշակերտների տարահանումն իրականացվում է հետևյալ դեպքերում՝

- երկրաշարժի (1-ին և 2-րդ հարկերից),
- Սելավի
- պայթյունի,
- հրդեհի,

Տարահանման ելքերի քանակը՝ հիմնական 1 և պահուստային 5, որոնցից 1-ը հարմարեցված է հենաշարժական խնդիրներ ունեցող անձանց համար: Տարահանման պայմանական նշաններ առկա են:

Տարահանման և պատսպարման ժամանակ հաշմանդամություն ունեցող աշակերտների ուղեկցման պատասխանատվությունը դրված է դասավանդող ուսուցչի վրա:

Աշակերտների տարահանումը անմիջապես իրականացնում են դասը վարող ուսուցիչները՝ պարտադիր վերցնելով աշխատանքային մատյանը: Տարահանումից հետո պատսպարման և տարահանման պատասխանատուն և ուսուցիչները անմիջապես իրականացնում են աշակերտների և անձնակազմի հաշվառում, որի վերաբերյալ զեկուցվում է ղեկավարությանը:

Տարահանման պլանները մշակված և փակցված են համապատասխան վայրերում, որոնց հիման վրա իրականացվում է տարահանումը (տարահանման պլանները ներկայացվում են ՀԴ տնօրենի հրամանով հաստատված N 5 հավելվածում): Համապատասխան ԱԻ սպառնալիքի կամ առաջացման դեպքում աշակերտներն ու անձնակազմը պատսպարվում են նախապես որոշված վայրերում:

Տարահանման, պատսպարման և անհատական պաշտպանության միջոցառումները արտացոլված են ՀԴ տնօրենի հրամանով հաստատված N 5 հավելվածում՝ ըստ բնորոշ աղետների ստանդարտ գործողությունների ընթացակարգերը:

4.3 Հրդեհաշիջման կազմակերպումը և իրականացումը

Հրդեհային անվտանգության պատասխանատուն է՝ Դ. Կոստանդյանը:

ՀԴ-ում հրդեհի ծագման ժամանակ տնօրենի, հրդեհային անվտանգության պատասխանատուի և անձնակազմի հիմնական գործողությունները ուղղված են աշակերտների անվտանգության ապահովմանը, նրանց տարահանմանը և փրկմանը:

Հրդեհի առաջացման պատճառներն են՝

- Կրակի հետ անզգուշ վարվելը,
- Էլեկտրական սարքավորումների տեղակայման և շահագործման կանոնների խախտումը,
- Կրակի հետ աշակերտների խաղալը,
- Վառարանների տեղակայման և շահագործման կանոնների խախտումը,
- հրկիզումները,
- կայծակի ուղիղ հարվածը՝ երբ բացակայում է շենքում կայծակապաշտպանիչը,

ՀԴ-ի ցանկացած աշխատակից հայտնաբերելով հրդեհ կամ նրա նշանները (ծուխ, վառված հոտ կամ տարբեր նյութերի մխում), պարտավոր է՝

- Տալ հրդեհի ազդարարման ազդանշան, անմիջապես հայտնել տնօրենին, հրդեհային անվտանգության պատասխանատուին,
- Անմիջապես այդ մասին հայտնել հրշեջ ծառայությանը 911 կամ 112 հեռախոսահամարներով՝ հստակ հայտնելով ՀԴ-ի հասցեն, հնարավորության դեպքում հրդեհի առաջացման վայրը, ինչ է այրվում և ինչին է սպառնում հրդեհը, ինչպես նաև հայտնել իր պաշտոնը, ազգանունը, հեռախոսահամարը,
- Ապահովել մոտակա տարածքի աշակերտների և անձնակազմի իրազեկությունը և տարահանումը,
- Սկսել հրդեհաշիջման աշխատանքները ձեռքի տակ ունեցած առաջնային հրդեհաշիջման միջոցներով:

ՀԴ-ի տնօրենը կամ հրդեհային անվտանգության պատասխանատուն հասնելով հրդեհի վայր պարտավոր է՝

- ստուգել, արդյոք կանչվել է հրշեջ ծառայություն,
- ՀԴ-ի անձնակազմին տեղյակ պահել հրդեհի մասին,
- Մինչ հրշեջ ստորաբաժանման ժամանումը իրականացնել անձնակազմի և աշակերտների տարահանում,
- Կազմակերպել շենքից տարահանված անձնակազմի և աշակերտների քանակի ստուգում՝ մատյանների և ցուցակների համաձայն,
- Հրդեհաշիջման աշխատանքները ղեկավարել մինչև հրշեջ ծառայության ժամանելը,
- Ազդարարման և տեղեկատվության փոխանակման պատասխանատուին հանձնարարել դիմավորել հրշեջ-փրկարարներին,
- Կազմակերպել էլեկտրամատակարարման, գազամատակարարման, ջերմամատակարարման և օդափոխության համակարգերի անջատումը, իրականացնել այլ միջոցառումներ, որոնք կկանխեն հրդեհի տարածումը,
- Հրդեհի վայրից տարահանել այն աշխատակիցներին, որոնք ներգրավված չեն հրդեհաշիջման աշխատանքներին,
- Ապահովել տարահանմանը և հրդեհաշիջմանը մասնակցող մարդկանց անվտանգությունը,

- Կազմակերպել նյութական արժեքների տարահանումը վտանգավոր գոտուց, որոշել դրանց պահեստավորման վայրերը և անհրաժեշտության դեպքում ապահովել դրանց հսկումը,
- Անհրաժեշտության դեպքում կանչել բժշկական և այլ ծառայությունների:

Մինչև հրդեհաշիջում սկսելը չի կարելի բացել պատուհաններն ու դռները, ինչպես նաև կոտրել ապակիները: Լքելով շենքը, անհրաժեշտ է փակել բոլոր դռներն ու պատուհանները, քանի որ թարմ օդի հոսանքը նպաստում է կրակի տարածմանը:

Հրշեջ ծառայության ժամանելունպես՝ տնօրենը, ազդարարման և տեղեկատվության փոխանակման պատասխանատուն կամ հրդեհային անվտանգության պատասխանատուն պարտավոր են հրշեջ-փրկարարական ջոկատի ղեկավարին հայտնել հրդեհի աղբյուրի, կատարված աշխատանքի և կարևոր տեղեկություններ, որոնք կնպաստեն հրդեհաշիջմանը:

Հրդեհաշիջման պատասխանատուն, կախված իրավիճակից և ներգրավված ուժերից, ստեղծում է օպերատիվ շտաբ՝ դրա կազմի մեջ ներգրավելով ՀԴ-ի ներկայացուցիչներին,

Հրդեհաշիջում կազմակերպելու համար առկա են հետևյալ հրդեհաշիջման միջոցները՝

- կրակմարիչներ՝ 4 հատ,
- հրշեջ վահանակներ՝ 1 հատ,

Հրդեհի դեպքում անձնակազմի և աշակերտների մասնակի կամ ամբողջական տարահանում իրականացվում է համաձայն տարահանման պլանի (ՀԴ տնօրենի հրամանով հաստատված N 5 հավելված) և ստանդարտ գործողությունների (ՀԴ տնօրենի հրամանով հաստատված N 6 հավելված):Հրդեհի դեպքում տեղեկատվության փոխանակումն իրականացվում է համաձայն ՀԴ տնօրենի հրամանով հաստատված N 4 հավելվածի:

4.4 Առաջին օգնության կազմակերպումը և իրականացումը

Առաջին օգնության պատասխանատուն է՝ Գ. Տոռոզյանը:

Առաջին օգնությունը պացիենտի, վիրավորի կամ տուժածի կյանքը փրկելու, կենսական կարևոր օրգան-համակարգերի աշխատանքը վերականգնելուն /կամ պահպանելու, տառապանքները մեղմելու, առողջական վիճակի հետագա վատթարացումը և հնարավոր բարդությունները կանխարգելելու նպատակով իրականցվող անհետաձգելի խնամքին/ կամ օգնության տրամադրումն է՝ մինչև անձի վիճակի կայունացումը կամ նրա ապաքինումը, կամ մինչև ավելի բարձր մակարդակի օգնության կամ բժշկական օգնության և սպասարկման տրամադրումը: Կատարվում է մինչև մասնագիտացված օգնության ժամանելը կամ հիվանդին (տուժածին) բուժհիմնարկ հասցնելը:

Առաջին օգնության ցուցաբերման անհրաժեշտության դեպքում, պետք է անել հետևյալ քայլերը.

- Դեպքի վայրի զննումն անվտանգությա նապահովում, որն իր մեջ ներառում է չորս հարցերի պատասխաններ՝**ի՞նչ է պատահել, ի՞նչ վտանգ կա, քանի՞ տուժած կա, ո՞վ կարող է օգնել:**
- Եթե հնարավոր չէ ապահովել անվտանգությունը, ապա չթողնել մարդկանց մուտքը դեպքի վայր և անմիջապես ահազանգել մասնագետներին, իսկ անհրաժեշտության դեպքում կազմակերպել դեպք իվայրում գտնվողների տարահանումը:
- Զննել տուժածին և ցուցաբերել համապատասխան օգնություն:
- Հանգստացնել տուժածին, առաջին օգնություն ցուցաբերել ու և զուգահեռ իրականացնել հոգեբանական օգնություն:

- Անմիջապես դեպքի մասին հայտնել շտապօգնության ծառայությանը 103, 911 կամ 112 հեռախոսահամարներով՝ հստակ հայտնելով ՀԴ-ի հասցեն, տուժածների վերաբերյալ մանրամասները, ինչպես նաևհ այտնելիր պաշտոնը, ազգանունը, հեռախոսահամարը:

Տարահանման հավաքատեղիում առաջին օգնության պատասխանատուի կողմից ծավալվում է առաջին օգնության ցուցաբերման տեղամաս (նախապես որոշված տեղում), որտեղ մինչ շտապ օգնության ժամանումը տուժածներին ցուցաբերվում է առաջին օգնություն:

Տուժածների հանձնումը շտապ օգնության աշխատակիցներին իրականացվում է ՀԴ-ի տնօրենի իմացությամբ, ինչպես նաև հնարավորության դեպքում ծնողի համաձայնությամբ՝ համաձայն համապատասխան ՀՀ օրենսդրության:

Հաղորդակցության և ազդարարման պատասխանատուն տուժած աշակերտի վիճակի, ցուցաբերված առաջին օգնության և շտապ օգնությանը հանձնելու վերաբերյալ տեղեկատվությունը, իմացության և համաձայնության նպատակով, հաղորդում է աշակերտի ծնողներին:

4.5 Առաջին հոգեբանական աջակցության կազմակերպումը և իրականացումը

Առաջին հոգեբանական աջակցության պատասխանատուն է՝ Ա. Ծատրյանը:

Արտակարգ իրավիճակներում հոգեբանական աջակցության նպատակով իրականացվում է՝ օգնություն բուռն հուզական ռեակցիաներ դրսևորող աշակերտների, սթրեսային գործոնների հնարավոր բացասական ազդեցության կան խում կամ մեղմ ում աշակերտների հետագա կենսագործունեության վրա, մասնագիտացված ծառայությունների հետ օպերատիվ կապի և համագործակցության ապահովում:

ՀՀ վրա զինված հարձակման, դրա անմիջական վտանգի առկայության կամ ՀՀ Ազգային ժողովի կողմից պատերազմ հայտարարվելու դեպքում անձնակազմի և աշակերտների պաշտպանությունը կազմակերպվում և իրականացվում է համաձայն ՀԴ-ի քաղաքացիական պաշտպանության պլանների կամ պլան-ժամանակացույցերի:

V. ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ

ԱԻ-ից հետո ՀԴ քայլեր է ձեռնարկում իր գործունեության շարունակականության և կրթության գործընթացի վերականգնման ուղղությամբ՝ նպաստելով ԱԻ-ից տուժած անձանց, աշակերտների ֆիզիկական պաշտպանության, սոցիալ-հոգեբանական, զարգացման և իմացական կարիքներին՝ունենալով կենսապահման և կենսափրկիչ նշանակություն: Ուսումնական գործընթացի վերականգնումը կապահովի աշակերտների կրթություն ստանալու իրավունքը, կվերադարձնի բնականոն կյանքի, կայունության, ապահովվածության զգացողությունը և կազմակերպվածությունը: Կրթությունը կարող է փրկել մարդկային կյանքեր՝ ապահովելով նրանց ֆիզիկական պաշտպանվածությունը վտանգներից:

Ուսումնական գործընթացի վերականգնման նպատակով ձեռնարկվում են հետևյալ աշխատանքները.

- Շենքի կայունության գնահատում: Շենքի հետագա շահագործման անհնարինության դեպքում, կդիտարկվի այլ ընտրանքային տարբերակներ, օրինակ՝ վրանային պայմաններում կամ այլ հարևան հանրակրթական դպրոցներում ուսումնական

գործընթացի վերսկսում՝ հաշվի առնելով նաև տարբեր ախտաբանական վիճակներով հաշմանդամություն ունեցող աշակերտների կարիքներն ու առանձնահատկությունները.

- Ուսումնական գործընթացի համար առկա գույքի (դասագրքեր, սեղան, աթոռ, գրատախտակ, գրենական պիտույքներ և այլն) կարողության գնահատումն անհրաժեշտության դեպքում անհրաժեշտ գույքի հայթայթում՝ հաշվի առնելով նաև տարբեր ախտաբանական վիճակներով հաշմանդամություն ունեցող աշակերտների առանձնահատկությունները և կարիքները, օրինակ՝ դիմելով այլ հանրակրթական դպրոցներին, տեղական և մարզային իշխանություններին, տեղական և միջազգային կազմակերպություններին և այլն.
- Անհրաժեշտության դեպքում ուսումնական գործընթացը կազմակերպելու համար կհավաքագրվեն նոր դասավանդողներ՝ ներգրավելով թոշակառու դասավանդողների, մանկավարժական ԲՈՒՀ-երի սովորողների, հարակից մասնագիտությունների տեր անձանց, ինչպես նաև մասնագիտացված մասնագետների՝ սուրդոմանկավարժ, հատուկ մանկավարժ, տիֆլոմանկավարժ, ովքեր կարող են աշխատել նաև տարբեր ախտաբանական վիճակներով հաշմանդամություն ունեցող աշակերտների հետ և այլն.
- Աշակերտներին, հատկապես բուռն հուզական ռեակցիաներ դրսևորող աշակերտներին, սթրեսային գործոնների բացասական ազդեցության մեղմացման և հետագա կենսագործունեության վրա ազդեցության նվազեցման համար հոգեբանասոցիալական աջակցության կազմակերպում.
- Հնարավորության դեպքում կկազմակերպվի սննդի տրամադրման շարունակականությունը.
- Եթե արտակարգ իրավիճակով (օրինակ՝ համաճարակի դեպքում) պայմանավորված ՀԴ-ում հնարավոր չէ կազմակերպել ուսումնական գործընթացը, ապա աշակերտների հետ կիրականացվի հեռահար ուսուցում:

VI. ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԸՆԹԱՑԻԿ ՏԱՐՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ

ԱՌԿ պլանում փոփոխություններն ընթացիկ տարվա ընթացքում կարող են տեղի ունենալ՝

- ՀԴ-ի տնօրենի առաջարկությամբ.
- ԱՌԿ խորհրդի անդամների առաջարկությամբ.
- Սույ նպլանի շրջանակներում իրականացված գործնական պարապմունքների արդյունքներով ի հայտ եկած թերությունների հիման վրա: